CA 84

Ադրկոմկուսի (բ) Կենտրոնական յեվ Բագվի Կոմիտեներ

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք.

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

«Արդյունաբերության զարգացման պայմանները արմատապես փոխվել են, ստեղծվել են նոր պայմաններ, վարոնք ղեկավարության նոր ձեվեր են պահանջում»:

Ի. ՍՏԱԼԻՆ.

ՍՏՈՒԳՈՒՄ ԵՆՔ ԸՆԿ. ՍՏԱԼԻՆԻ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

Ոգնություն նիգնասուգման բրիգադներին

ԳՐՔՈՒՅԿ I

338.4
Ա-90

ԱԶԵՐՆԵՇՐ
Բագու — 1931

33 8 6-AUG 2013
Ч-90

31.322

AZƏRNƏŞR mətbəəsində basıldı.
Bakı, Balşoj Marskoj və Krasno-Presnenskiy quçələrin tinində № 16/36

Baş Mətbyat Mudirliyi № 7392.
Sifariş № 882. Sayı 2000. Statəlçu A5

Ընկ. Ստալինի ցուցմունքների կատարման ինքնաստուգման բրիգադներին ոգնելու գրուցկների սերիան հրատարակվում է դեկավարությամբ ընկ. Ռուբանովիչի.

Ընկ. ՍՏԱԼԻՆԻ ճառից, արտասանած տնտեսավարների խորհրդակցությունում:

Ընկերներ, խորհրդակցության նյութերից յերևում է, որ պլանն իրագործելու տեսակետից՝ մեր արդյունաբերությունը բավական խայտաբղետ պատկեր է ներկայացնում:

Արդյունաբերության այնպիսի ճյուղեր կան, որ անցյալ տարվա համեմատությամբ՝ անցած 5 ամիսներում արտադրանքի 40-50 տոկոս աճում են տվել: Կան ճյուղեր, որոնց տված աճումը 20-30 տոկոսից ավել չե. վերջապես կան արդյունաբերության առանձին ճյուղեր, որ նվազագույն աճումն են տվել, հաղիվ 6-10 տոկոս, դեռ դրանից էլ քիչ:

Վերջինների թվում պետք է հաշվել քարածուխի արդյունաբերությունն ու սև մետաղագործությունը:

Ինչպես տեսնում եք՝ խայտաբղետ պատկեր է: Ինչով բացատրել այս խայտաբղետությունը. ինչն է արդյունաբերության որոշ ճյուղերի հետամնացության պատճառը: Ինչն է պատճառը, որ արդյունաբերության որոշ ճյուղեր ընդամենը միայն 20-25 տոկոս աճում են տվել, իսկ ածուխի արդյունաբերությունն ու սև մետաղագործությունն էլ ավելի պակաս աճում են տալիս ու մյուս ճյուղերի հետևից են քարշ գալիս:

Պատճառն այն է, որ վերջին ժամանակներս արդյունաբերության զարգացման պայմաններն արմատապես փոխվել են: Ստեղծվել են նոր պարագաներ, որ ղեկավարության նոր պրիյոմներ են պահանջում, իսկ մեր մի քանի տնտեսավարներ փոխանակ աշխատանքի պրիյոմները փոխելու՝ շարունակում են հին ձևով աշխատել:

Հետևաբար բանը նրանումն է, որ արդյունաբերության զարգացման նոր պայմանները պահանջում են նոր ձևով աշխատանք, իսկ մեր որոշ տնտեսավարներ այդ չեն հասկանում, չեն տեսնում, որ այժմ նոր ձևով պետք է ղեկավարել: Այդ է պատճառը մեր արդյունաբերության որոշ ճյուղերի հետամնացության:

Արդյունաբերության զարգացման ինչ նոր պայմաններ են դրանք:

Վորտեղից են լույս ընկել դրանք:

Այդ պայմաններն առնվազն վեցն են:

Քննենք այդ պայմանները:

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
АКАДЕМИИ НАУК
СССР

Ընկ. Ստալինի ճառի շարունակությունը հաջորդ գրուցկում:

I. ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ՏԵՄՊԵՐԻ ՀԱՄԱՐ

Հնգամյակի յերրորդ վճռական տարում Խորհրդային Միությունն ավարտում է սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցումը։

Նույն այդ ժամանակ բուրժուական-կապիտալիստական աշխարհը ընդգրկված է ամբողջ կապիտալիստական սիստեմի չբաժանված ճգնաժամով։ Ճգնաժամն իր ճանկերի մեջ է առել վոչ միայն արդյունաբերությունն ու գյուղական տնտեսությունը, այլ և ֆինանսները, այսինքն՝ կապիտալի սրբության սրբոցը։ Մնանկանում են ամենախոշոր բանկերը, տապալվեց ֆունտ ստերլինգը, տատանվում է դոլարը։ Անդուսպ կերպով աճում և գործազրկությունը, իր մեջ առնելով նոր միլիոնավոր և տասնյակ միլիոնավոր բանվորներ ու աշխատավորներ։ Կանգ են առնում ֆաբրիկներն ու գործարանները, ոսատկանում են կապիտալի միջազգային հակասություններն ու դասակարգային պայքարն ավելի ու ավելի սուր ձևեր է ընդունում։

Տնտեսական ճգնաժամը, վոր համաշխարհային կապիտալիստական տնտեսության ամբողջ սիստեմն է ընդգրկել, աճում, քաղաքական ճգնաժամի է փոխվում, վոր հեղափոխական դրություն է ստեղծում մի շարք յերկրներում։

Այդ պայմաններում մենք պիտի Խորհրդային Միությունում սոցիալիստական շինարարության բոլշևիկյան տեմպերը ապահովենք, նրա ուժն ու պաշտպանվելու ընդունակությունն ամրապնդելով, մեր տնտեսությունն ազատելով ոտար յերկրներից կախումն ունենալուց։

Տնտեսության բոլոր ճյուղերում մենք մի շարք խոշորագույն հաջողություններ ունենք։ Ամեն որ 518-ի հաշվին նոր գործարաններ են լծվում արդյունաբերության աշխատանքին։ Հենց մոտ որերս աշխատել են սկսել համաշխարհային հսկաները— «ԱՄՈ» գործարանը, վորը պետք է մի հերթափոխությամբ տարեկան 25 հազար ավտոմոբիլ տա, և Խարկովի տրակտորի գործարանը։

Այդ աճումն ինչ խնդիրներ է դնում Ադրբեջանի ու Բազվի բանվորների և կուսակազմակերպությունների առաջ։—Պետք է արդյունաբերության՝ նավթի, բենզինի, յուղերի ու մյուս պահանջներին բավարարություն տա։ Բացի դրանից՝ որեց որ աճում է Խորհրդային Միության սովխոզների ու կոլխոզների պահանջը, վոր առանձնապես սուր է զգացվում աշնանացանի կամպանիայի ժամանակ։ Նրանք ամենից առաջ նավթարդյունաբերության արտադրանք են պահանջում։

ՀՍՍՌ-Ադա.ՍՍՌ
56777.66

4-ՐԴ ՅԵՌԱՄՄՅԱԿՆ ՈՒ ՃԵՂՔՎԱԾՔԸ ՆԱՎԹԻ ՖՐՈՆՏՈՒՄ

Իսկ ինչպես է դրությունն ընկերներ, յերբ մենք հնգամյակի յերրորդ վճռական տարվա վերջին, 4-րդ յեռամսյակն ենք մտնում։

Վերջին թվերն այն են ասում, վոր մենք շատ ենք աշխատում նավթային արդյունաբերության մեջ, անբավարար ենք իրագործում Ազնեվթի արդիֆինպլանը։

Այս տարվա հոկտեմբերի 8-ին նավթի որական ծրագիրն իրագործված է 72,6 տոկոսով։ Լենինյան ռայոնը կատարում է ծրագրի 70,6 տոկոսը, Սուրախանին—76,8 տոկոսը, Բայիլի ռայոնը Բուխտի հետ միասին՝ 69,2 տոկոսը և այլն։

Ճիշտ է, ընկերներ, կան առանձին նավթահանքեր, վոր չեն զիջում իրենց բոլշևիկյան դիրքերը։ Որինակ՝ Լենինյան 7-րդ նավթահանքը տալիս է ծրագրի 100,9 տոկոսը, Սուրախանու 3-րդ նավթահանքը տալիս է ծրագրի 99 տոկոսը, Բիբի-Հեյբաթի 1-ին նավթահանքը—99 տոկոսը։

Սակայն դրանց փոխարեն մի շարք նավթահանքեր հետ են մնում և հարկավոր է անհապաղ վճռական ու խիստ միջոցներ ձեռք առնել, վորպեսզի այլ ևս առաջ չգնալ այդ թեք ուղիով, այլ ընթացքը շուտ տալ դեպի արդիֆինպլանի համար տարվող պայքարի մարտական տեմպերը։ այն արդիֆինպլանի, վոր այնքան դեղեցիկ ու այնպիսի վոգևորությամբ կատարեցին Բագվի մեր նավթագործները, նավթի հնգամյակն իրականացնելով $2^1/_2$ տարում։

Չե՞ վոր մարտի վերջին նավթահանությունը հասել էր պլանի 104 տոկոսին։ Կատարյալ հնարավորություն կա նավթի արդիֆինպլանը լիովին իրագործելու։ Միայն ոպորտունիստները կարող են ասել, թե պլանի ռեալ չե։ Վոչ պլանը ռեալ է, միայն, ընկերներ, այդ պլանը մենք վատ ենք կատարում։ Ահա նավթահանքեր, վոր ամենից ավելի են հետ մնում, իրանց աշխատանքում դեպի ոպորտունիստական տեմպերն են սահում։ Տրված տեղեկություններով՝ հոկտեմբերի 8-ին Լենինյան 2-րդ նավթահանքը տվել է ծրագրի 49,9 տոկոսը, Սուրախանու 1-ին նավթահանքը —ծրագրի 51,1 տոկոսը, Լենինյան 3-րդ նավթահանքը—51,6, Սուրախանու 2-րդ նավթահանքը—68 տոկոսը, Բուխտան 58,7 տոկոսը, և նույն իսկ Բիբի-Հեյբաթի 2-րդ կարմրագրոշը—79,2 տոկոսը, իսկ Լենինյան 5-րդ նավթահանքը—75,6 տոկոսը։

Ադրկոմկուսի (բ) Կենտրոնական Կոմիտեն Ազնեվթի ղեկուցման առթիվ այս տարվա հոկտեմբերի 1-ն կայացրած իր վորոշման մեջ գտնում է, վոր—

«Նավթահանության հեռագա պակասելը՝ նավթային արդյունաբերությունում կուսակցության հիմնական գիծը խախտելու պարզ յերեվույթ է հանդիսանում»:

«Սակայն, ինչպես տեսնում եք այդ կողմից դեռ բեկում չի յեղել»:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՅԵՂԱԾ ՈՊՈՐՏՈՒՆԻԶՄԻ ԴԵՄ—ՄԵՔԵՆԱՅԱՑՐԱԾ ՆԱՎԹԱՀԱՆՈՒԹՅՈՒԸ ԿԱԶԴՈՒՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Այս տարվա առաջին 9 ամիսներում Ազնավթը Խորհրդային Միությանն 800,000 տոննն նավթ պակաս է տվել։

Այդ պակասը գումարվել է նրանից, վոր խորաքաշ նասոսներն ու կոմպրեսորները նավթ պակաս են հանել։ Շատրվաններից ստացված նավթը փոքր ինչ բարձրացնում է պլանը։ Մենք բոլորս կողմակից ենք շատրվաններին, վոր խորքերի մեր հարստությունն են բնորոշում։ Բայց յերբ դրա հետ միասին ճեղքված գոյություն ունի և մեքենայացրած սեկտորը, այսինքն խորաքաշ նասոսներն ու կոմպրեսորները թերի են կատարում պլանը, դա նշանակում է, վոր մեքենայացրած նավթահանության պարզ թերագնահատում կա, վորը վնաս է բերում կոմպրեսորների ու խորաքաշ նասոսների աշխատանքին, խախտում է 15 միլ. 300 հազար տոննն նավթի ծրագրի կատարումը։

Այդ բանը, ընկերներ, ավելի ցայտուն կերպով մենք տեսնում ենք Բուխատում, վորտեղ ոպորտունիստական ղեկավարությունը փոխելուց, գրուպպովշչինան լիկվիդացիայի յենթարկելուց հետո նոր ղեկավարությունն այժմ պայքարում է նրա համար, վոր նոր հորեր գործի գցելու ու հորափորման պլանը կատարելու հետ միասին՝ մեքենայացրած սեկտորի, խորաքաշ նասոսների և կոմպրեսորների նորմալ աշխատանքը վերականգնե։ Մեքենայացրած նավթահանության թերագնահատությանը չի կարելի ուրիշ անուն տալ, քան ոպորտունիզմ՝ մեր տնտեսական քաղաքականության, մասնավորապես նավթային արդյունաբերության բնագավառում։

Այժմ, 4-րդ յեռամսյակում անհրաժեշտ է ծածկել այն պակասը, վոր այս տարվա առաջին 9 ամիսներում է առաջացած։ Այդ պակասը ծածկել կարելի է՝ հաղթահարելով այն դժվարությունները, վոր կապված են անբավարար տեխնիկական մատակարարման, նավթարդյունաբերության առանձնահատուկ պայմանների ու սոցիալիստական շինարարության տեմպերին չհավատացող ոպորտունիստական տարրերի դիմադրության հետ։ Այդ պակասը ծածկել կարելի է՝ հաղթահարելով մեր տնտեսական որգանների ապարատում դեռ ևս գոյություն ունեցող անշարժությունն ու կոնսերվատիզմը։

Պետք է 4-րդ յեռամսյակում վոչ միայն նավթահանության 80.000 տոննն պակասը ծածկել, այլ և բոլոր վորակական ցուցանիշների իրագործումն ապահովել, և, վոր նույնպես չափազանց կարևոր է, Ազնավթի արտահանական պլանն ապահովել, վորից նշանակալի չափով Խորհրդային Միության ժողովրդական տնտեսական պլանն է կախված։ Նավթի արտահանական մթերքներով Խորհրդային Միությունը վայլուտա է ստանում առանց վորի չի կարելի նորագույն տեխնիկայի հսկաներ կառուցել։

Ընկ. Ստալինի ճառը, վոր սոցիալիստական շինարարության հաջող զարգացման համար պայքարի գործառնական ծրագիր է հանդիսանում, պետք է դարձյալ ու դարձյալ պարզաբանել բանվորական մասսաներին, դարձյալ ու դարձյալ հասցնել յուրաքանչյուր հարվածայնի, յուրաքանչյուր տնտեսավարի ու մասնագետի, յուրաքանչյուր բանվորի, բանվորուհու, բանվորի կնոջ, հասցնել բոլոր աշխատավորներին և ամենից առաջ նրանց, վոր արդյունաբերության աշխատանքի հետ են կապված։

Արվածն է այդ բանն արդյոք։ Կարծում եմ, վոր արված է վոչ բավականաչափ։

Ընկ. Ստալինի ճառը, ապշեցնում է իր խորությամբ, իր հանճարեղ սրատեսությամբ, իր ցուցմունքների կոնկրետությամբ։

Ընկ. Ստալինն ինչպես է վորոշում ծրագիրը չիրագործելու պատճառները։ Նա ասում է այն, ինչ վոր ամբողջովին համապատասխանում է իրականության և ինչ վոր մենք տեսնում ենք մեր սեփական փորձով։

«Վորտե՞ղ է արդյունաբերության վորոշ ճյուղերի հետ մնալու պատճառը։ Այդ պատճառը նրանում է կայանում, վոր վերջին ժամանակներս արդյունաբերության զարգացման պայմանները փոխվել են արմատապես, ստեղծվել են նոր պայմաններ, վոր ղեկավարության նոր պրիյոմներ են պահանջում. սակայն մեր վորոշ տնտեսավարներ փոխանակ աշխատանքի պրիյոմները փոխելու, դեռ շարունակում են հին ձևով աշխատել։ Ուրեմն բանը նրանում է, վոր արդյունաբերության զարգացման նոր պայմանները նոր ձևով աշխատել են պահանջում, սակայն մեր վորոշ տնտեսավարներ այդ չեն հասկանում յեվ չեն տեսնում, վոր այժմ պետք է նոր ձևով ղեկավարել»։

Ճիշտ է այդ, ընկերներ։ Կարծում եմ, վոր բոլորս միաձայն կարող ենք պատասխանել, վոր դա անպայման ճիշտ է։

Թեև ճիշտ է, վոր մեզ հարվածում է վատ մատակարարումը, բայց վատ մատակարարումն ել հենց մեզանից, այդ ասպարիզում մեր կատարած աշխատանքից է կախված։

Պետք է այնպես անել, վոր ընկ. Ստալինի ճառը յուրաքանչյուր տնտեսավարի ու մասնագետի—վորպես արտադրության կազմակերպողի և ղեկավարի—վոչ միայն ուղեղի, այլ և սրտի մեջ թափանցի։

Ամենից առաջ մեր տնտեսավարներին են ուղղված հենց իրանց խորհրդակցությունում կուսակցության առաջնորդ ընկ. Ստալինի ճառը փոխված պայմաններում վերակառուցվելու և նոր ձևով աշխատելու մասին։

Կուսակցության Բագվի Կոմիտեն ընկ. Ստալինի ճառի իրագործման ինքնաստուգման մասին վորոշում է կայացրել։ Այդ վորոշումը յուրացրել են մասսաները և առանձնապես արտադրական ակտիվը, ձեռնարկությունների հարվածայիններն ու յերիտասարդ մասնագետները։ Խնդիրը նրանում է, վոր ամբողջ բանվորական մասսան ու պրոլետարական արտադրական հասարակությունը այնտեղ ակտիվ մասնակցություն ունենա՝ գլխավորությամբ կուսակցական կազմակերպության, տնտեսավարների ու մասնագետների։

Ընկ. Պոլոնսկու ճառից, արտասանած Ստալինյան (նախկին Բալիղ-Բիբի-Հեյբաթի) ռայոնի հարվածայիններ համառայոնական հավաքում, 1931 թ. հոկտեմբերի 9-ին։

ԱԴՐԿՈՄԿՈՒՍԻ (Բ) ԲԱԳՎԻ ԿՈՄԻՏԵԻ ԲՅՈՒՐՈՅԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 16-Ի ՅԵՎ 26-Ի ՎՈՐՈՇՈՒՄԸ

Բագվի կազմակերպության կողմից ընկ. Ստալինի դիրեկտիվների (տնտեսավարների խորհրդակցությունում արտասանած ճառը) կատարման մասնայական ինքնաստուգման մասին.

1. Հնգամյակի 3-րդ վճռական տարվա առաջին 9 ամսվա պլանի իրագործումը, նավթային արդյունաբերության և մյուս ճյուղերում աճման դրական ցուցանիշների ավարտման հետ, թերակատարված է Աղնեվթի, Կասպարի, նավթամեքենակառուցման, յերկաթուղու և մի շարք ուրիշ ձեռնարկների ծրագիրները։ Դրանից յելնելով Բագվի կազմակերպությունն իր առաջ խնդիր է դնում ինքնաստուգման և լայն մասսաների մոբիլիզացիայի յենթարկելու հիման վրա, բոլշևիկյան ինքնաքննադատություն ծավալելով, ապահովել ընկ. Ստալինի դիրեկտիվների իրագործումը՝ չորրորդ յեռամսյակում ծածկելու պակասները և 31 թվի պլանի լիովին կատարման ապահովումը։

2. Անխնա պայքար ոպորտունիստական ինքնահոսի, մանրբուրժուական «ձախլիկ» հավասարեցման, բանուժի հոսունության և անդիմության դեմ, պայքար բանուժը կազմակերպված ձևով հավաքելու, քաղաքային տնտեսությունը և բանվորների կենցաղային սպասարկումը բարելավելու համար, պայքար աշխատանքի լավագույն կերպով կազմակերպելու, բանվոր դասակարգի պրոլետարական մասնագետներ պատրաստելու, բանվոր դասակարգի մարդկանցից հին դպրոցի լավագույն մասնագետներին ներգրավելու, տնտեսհաշիվն արտադրության մեջ արմատացնելու և Լենինյան ազգային քաղաքականությունը սոցիալիստական շինարարության ամբողջ պրակտիկայում ճիշտ կիրառելու համար—այս ամենը մեր բոլոր կազմակերպությունների—առաջին հերթին—կուսակցական և տնտեսական կազմակերպությունների ինքնաստուգման աշխատանքների խնդիրներն են։ Ամեն մի հապաղում, դանդաղկոտություն, չկամություն՝ գործականում նոր տնտեսական—քաղաքական կարևոր խնդիրների լուծման մոտենալու գործում չեն կարող դիտվել այլ կերպ, յեթե վոչ աջ ոպորտունիզմի արտահայտություն գործնականում։

3. Ընկ. Ստալինի ցուցմունքների իրացնելու ստուգումը, վորը գործողության կոնկրետ ծրագիր է հանդիսանում, պետք է պարտադիր պայման լինի 4-րդ յեռամսյակի խնդիրների իրացման գործում, վորը բացառիկ նշանակություն ունի 1931թ. ամբողջ ծրագրի իրացման և հնգամյակի վերջին տարվա խնդիրների լուծման նախապատրաստության համար։ Բագվի կազմա-

կերպությունում լայն ծավալված ինքնաստուգման աշխատանքը պետք է ապահովի բոլոր կազմակերպությունների ներքևից մինչև վեր բոլոր աշխատանքների իսկական վերակառուցումը, համաձայն ընկեր Ստալինի դիրեկտիվների, բանվորների մեջ ստեղծել ենտուզիազմի նոր ալիք՝ սոցմրցումն ու հարվածայնությունը հասցնել բարձրագույն աստիճանի։

Կուսակցական կազմակերպությունները պետք է լայն ծավալեն բանվորների, հարվածայինների նոր խավեր կուսակցության շարքերը ներգրավելու գործը, մանավանդ թուրք բանվորներին և թրքուհիներին։

4. Կազմակերպությունների ինքնաստուգումը սկսել անմիջապես՝ այդ համարելով առաջիկա ռայոնական և Բագվի կուսկոնֆերանսների նախապատրաստական աշխատանքների սկիզբը և կարևորագույն եռապը։

Ստորին կազմակերպությունների աշխատանքների վերակառուցման գործնական ոգնություն գույց տալու համար հիմնական ձեռնարկներն ուղարկել Բագվի Կոմիտեի հատուկ բրիգադները։

Առաջարկել բոլոր ռայկոմներին նման բրիգադներ կազմակերպել ռայոնների հիմնական ձեռնարկներն ուղարկելու համար։

5. Ընկ. Ստալինի դիրեկտիվների իրացման ստուգման հիմնական մեթոդը ձեռնարկներում հանդիսանում է՝ ինքնաստուգման բրիգադները՝նրա ճառի բովանդակության՝ առանձին կոնկրետ խնդիրների վերաբերմամբ ներգրավելով մակսիմալ չափով կուսակցականներին, լայնորեն ներգրավելով բանվորներին, ինժեներ-տեխնիկական կազմը, կոմյերիտականներին, տեղական մամուլը և այլն։ Ինքնաստուգման բրիգադները պետք է հետևողականորեն ստուգեն ընկ. Ստալինի ցուցմունքների իրացումը՝ ամեն մի հարցի վերաբերյալ։

Առաջարկել բոլոր ռայկոմներին ապահովել բրիգադների հրահանգման գործը այնպես, որպեսզի ամեն մի բրիգադա ճիշտ իմանա իր աշխատանքի խնդիրներն ու մեթոդները։

6. Ռայկուսկոմիտեները բոլոր ռայոններում ձեռնարկների յեռանկյունների, կոմբինիների քարտուղարների, խմբկազմակերպիչների, պատի և տպագրվող թերթերի խմբագիրների հրահանգչական խորհրդակցություններ հրավիրել՝ ինքնաստուգումն անցկացնելուն և աշխատանքների վերակառուցման հարցերին նվիրված։

7. Բոլոր ռայկուսկոմները, կոմսոմոլի Բագվի Կոմիտեն, Բագխորհրդի, Ադրպրոֆխորհրդի և պրոֆմիությունների ֆրակցիաները Բագվի Կոմիտեի տվյալ վորոշման հիման վրա պետք է անմիջապես Բագվի կազմակերպության ինքնաստուգմանը մասնակցելու իրենց կոնկրետ գործառնական պլանները մշակեն՝ համաձայնեցնելով Բագվի Կոմիտեի կազմհրահանգչական բաժնի հետ։

ԱԶՆԵՎԹԻ 1931 Թ. 8 ԱՄՍՎԱ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՅԵՎ 4-ՐԴ ՅԵՌԱՄՍՅԱԿԻ ԱՐԴՖԻՆՊԼԱՆԻ ՄԱՍԻՆ

Ադրկոսկուսի (Բ) Բագվի Կոմիտեի բյուրոյի 1931 թ. սեպտեմբերի 26-ի վորոշումը

1. Մատնանշել, վոր Ազնեվթն անցյալ տարվա համեմատությամբ—անցած 8 ամիսների ընթացքում հիմնական արտադրական ցուցանիշների խոշոր աճում է ունեցել ավելացնելով—նավթահանությունը—28,2%, հորափորությունը մետրաժով—24,6 տոկոս, շահագործման հորափորությունում արագությունը (պտտաձև)—17,79% (133,7 մետր), նավթի մշակումը 19,8%, բենզինի ստացումը մինչև 88% (1929—1930 թվի 80,6-ի փոխարեն)։ Ինքնարժեքը նավթահանության մեջ իջեցրված է 21%-ով, հորափորության մեջ 3,4% և նավթամշակման մեջ 13%-ով։

Չնայած այդ աճման, Ազնեվթի արտադրական ծրագիրը 8 ամսվա ընթացքում լիովին չի կատարված. նավթահանությունը կազմել է 93.8% (պակասորդը 585 հազար տոննն), հորափորության ծրագիրը մետրաժով կատարված է 64,4%, շահագործման հորափորության արագությունը 84,1%, նավթամշակման մեջ 94,8%։

Բագվի Կոմիտեն մատնանշում է դրության վատթարանալը և սեպտեմբեր ամսում, վոր արտահայտվել է նրանում, վոր նավթահանության ծրագիրն իրացվել է 25 որվա ընթացքում 85,6%-ով։

Ծրագրի չկատարելը հետևանք է, տնտեսավարների խորհրդակցություններում ընկ. Ստալինի տրված ցուցմունքների իրացումն դանդաղ տեմպերով կատարելում։ Այդ պատճառով Բագվի Կոմիտեն անհրաժեշտ է համարում՝ 4-րդ յեռամսյակի արդֆինպլանի կատարման համար բոլոր կազմակերպությունների մղած պայքարի հիմքում դնել ընկ. Ստալինի բոլոր ցուցմունքների կենսագործումը։

2. Անհրաժեշտ համարել չորրորդ յեռամսյակի նավթահանության ծրագրի մեջ մացնել առաջին—յերեք յեռամսյակների պակասորդը, հաստատել Ազնեվթի չորրորդ յեռամսյակի պլանը—նավթահանության համար—4,805 հազար տոննն, հորափորության համար—156 հազար մետր, հետախուզական հորափորության մեջ 63 հազար մետր, նավթամշակման համար—3,400 հազար տոննն։

3. Չորրորդ յեռամսյակի և ամբողջ տարվա նավթահանության ծրագիրն իրացնելն ապահովելու համար անհրաժեշտ համարել ավարտելու հորափորությունն ու շահագործման մեջ դնել 150 նավթահոր վերջին յեռամսյակի ընթացքում։ Առաջարկել Ազնեվթին, պրոֆմիությունների ու կուսակցության ռայոնական կոմի-

տեի հետ միասին, հորերը շահագործման մեջ դնելու կոնկրետ-ոպերատիվ պլան կազմել և ապահովել այդ պլանը հասցնելը մինչև ամեն մի հանքահոր։ Հաշվի առնելով այդ նպատակի համար անհրաժեշտ նյութերի և սարքավորման սուր պակասությունը՝ պարտավորեցնել Ադնեվթի և բոլոր պրոֆմիութենական, կուսակցական ու կոմերիտական կազմակերպություններին՝ ել ավելի լայնորեն ծավալել պայքարը՝ ներքին միջոցների մոբիլիզացիայի, ռացիոնալացման միջոցառումների համար և ոգտագործել բոլոր հնարավորությունները՝ դրված խնդիրն անպայման կատարելու համար։

4. Մատնանշել, վոր հորափորման հետ մնալու հետ միասին, նավթահանության պլանը չկատարելու հիմնական պատճառն է մեքենայացրած սեկտորի անբավարար դրությունը, վոր հետևանք է նրա նշանակության թերագնահատմանը՝ առանձին տնտեսավարների ու տեխնիկների կողմից։ Դա նասոսային և կոմպրեսորային տնտեսությունը հասցրել է այնպիսի դրության, վոր պահանջում է հիմնական շրջադարձ դեպի նրան և տնտեսության այդ բնագավառներում ռացիոնալացման աշխատանքների ուժեղացման։

Առաջարկել Ադնեվթին կարճ ժամանակվա ընթացքում ուսումնասիրել մեքենայացրված նավթահանության հետ մնալու պատճառները բոլոր հրապարակներում, վորտեղ այդ տեղի ունի, կոնկրետ միջոցառումների սիստեմ մշակել այդ բնագավառում և մինչև հոկտեմբերի 26-ը մատնել Բագվի Կոմիտեի բյուրոյի քննությանը։

5. Առանձնապես շեշտել նոր ու հին հրապարակներում հետախուզական հորափորման անբավարար արդյունքները, վոր չի ապահովում ՎԵԿԱՊԵ-ի (բ) Կենտկոմի դիրեկտիվների իրացումն՝ հետախուզումներն մաքսիմալ չափերով ուժեղացման մասին։

Առաջին յերեք յեռամսյակի պակասի լրացումը և հետախուզական հորափորման հետ մնալու վերացումը՝ համարել Ադնեվթի առաջնակարգ խնդիրը։

Առաջարկել ընկ. ընկ. Բարինովին և Աղավերդիևին բոլոր միջոցները (կադրեր, տեխ. մատակարարում, աշխատավարձ) բաշխելիս, աչքի առաջ ունենալ հետախուզումների պահանջների առաջնահերթ բավարարումը։

6. Իրագործել հետևյալ հիմնական միջոցառումները մշակման վերաբերմամբ.—

Նավթի ադտոտվածության դեմ պայքարելու համար՝ 4-րդ յեռամսյակում ավարտել Լենինյան ռայոնի նավթահանքերում շինվող առաջին սարքավորումը՝ նավթը ջրից և ցեխից մաքրելու համար։

Թեթև մասերի կորուստների դեմ պայքարելու համար, վոր տեղի է ունենում նավթահորի բերանից մինչև գործարանը, 4-րդ յեռամսյակի ընթացքում մշակել մանրամասն նախագծեր։

Մատնանշել, վոր նավթաթորման սարքավորումների կառուցումը չափազանց ուշանում է։

Ավարտել նոր օբյեկտները հետևյալ ժամկետներում.—

ա) Մ. Միլլերի սարքավորումը և խորհրդային մեկ տուրբչատկան—մինչև նոյեմբերի 7-ը։

բ) Կրեկինգ-բենզինի կրկնակի թորման սարքավորումը—մինչև ս. տ. նոյեմբերի 5-ը։

գ) Ասֆալտի սարքավորումը—մինչև ս. տ. հոկտեմբերի 1-ը։

Առաջարկել Ադնեվթին, վոր օբյեկտների հետ կապված բոլոր գործերում մացնի 2 և 3 հերթափոխական աշխատանք։ Նյութեղենի և սարքավորումների ընդհանուր ֆոնդից հատկացնել այդ օբյեկտներին անհրաժեշտ քանակությամբ նյութեր և սարքավորումներ։

Ադրկոմկուսի (բ) ֆաբ.-գործ. ռայկոմին առաջարկել՝ իր յուրաքանչյուր նիստում կանոնավոր կերպով լսել զեկուցումներ, հաշվետվություններ՝ այդ օբյեկտների կառուցման աշխատանքների ընթացքի մասին։

4-րդ յեռամսյակի ընթացքում վերջնականապես ավարտ և հաստատել նավթաթոր գործարանների, կերոսինի հին բատարեյաների վերակառուցման նախագծերը, աչքի առաջ ունենալով 1932 թվին նրանց առաջ դրված խնդիրները։

7. Մատնանշել, վոր Ադնեվթում գոյություն ունեցող աշխատավարձի սիստեմը—տեղի ունեցող հավասարեցումը—չի ապահովում աշխատանքի արտադրականության մեծագույն չափով բարձրացումը։ Պարտավորեցնել Ադնեվթին և նավթայինների միությանը մինչև նոյեմբերի 1-ը վերանայել աշխատավարձի սիստեմը, նպատակ ունենալով վերացնել հավասարեցումը, պրոգրեսիվ գործարքայնություն մացնելը, ապահովել առաջատար վորակի բանվորների աշխատավարձի աճումը։ Աշխատանքի վճարման նոր սիստեմի նախագիծը ներկայացնել Բագվի Կոմիտեի բյուրոյի հաստատության։

8. Ուժեղացնել Ադնեվթի համար բանվորական ուժ հավաքելը—նրա պահանջները բավարարելու համար։ Անհրաժեշտ համարել Ադնեվթում աշխատելու համար ներգրավել 1500 զորացրված կարմիր-բանակայիններ,—նրանցից 1000 հոգի թուրքեր և բացի դրանից 500 բատրակներ։ Պարտավորացնել Բագխորհրդին և Ժիլսայուզին՝ Ադնեվթին ամեն կերպ աջակցելու՝ զորացրված կարմիր-բանակայիններին տեղավորելու համար. Ադնեվթում անհապաղ անհրաժեշտ միջոցները ձեռք առնել՝ նոր բանվորներին բնակարաններով ապահովելու համար։ Պարտավորացնել Բագվի Սպառողակերությունների Միությանը և նավթայինների միությանը՝ ստեղծելու անհրաժեշտ նյութական-կենցաղային պայմանները՝ նրանց նավթային արդյունաբերության մեջ հաստատելու համար։ Բանվորական ուժի հոսունության դեմ կռվելու և արդյու-

նաբերություն քաշված նոր բ
ված կարմիր-բանակայիններ
բատրակներին ադոյունաբեր
առաջարկել Ադնեվթին արա
ու թեթև տիպի տների շինար

Ի գիտություն ընդունել
բությունը, թե հոկտեմբեր
և 500 մարդու համար շինվող

Պարտավորացնել Բազի
ձեռնարկել՝ կենտրոնական
դրից դուրս անելու բոլոր նրա
Խնդրել Ժողկոմխորհդ
ցնաժողով՝ Կոմունալ Տնտ
թյամբ՝ իրագործելու այս
Միության Ժողկոմխորհի վո

9. Մատնանշել իսկա
զանց դանդաղ տեմպերը,
Առաջարկել Ադնեվթին և
զետներից և տեսավարներից
հանձնարարել Ադնեվթի մի
ռին ձեռնարկներում ուսումն
կոնկրետ միջոցառումներ նշել
համար։ Խմբի կազմը նշանակ
Կոմիտեի քարտուղարությունը

Հանձնաժողովի աշխատանքի ժամկետը—մի ամիս։

10. Մատնագետների նյութական դրությունը բարելավելու համար՝ անհրաժեշտ համարել քաղաքային ռայոնում կազմակերպելու՝ փակ բաշխիչների հետ միասին նաև ճաշարան Ադնեվթի վարչական-տեխնիկական անձնակազմի համար։ Պարտավորեցնել Բազվի Սպառողների Միության նախագահին Բազվի Կոմիտեի բյուրոյի հետևյալ նիստում զեկուցել, թե ինչ միջոցներ են ձեռք առնված այդ ուղղությամբ։

Առաջարկել Ադնեվթին հարվածային կարգով հանրակացարան—տներ կառուցել բոլոր ռայոններում վարչական-տեխնիկական անձնակազմի համար։ Կառուցումների պլանը ներկայացնել Բազվի կոմիտեի հաստատությանը։

11. Զորբորդ յեռամսյակը պետք է Ադնեվթի և կուսակցական պրոֆեսիոնալ և կոմերիտական կազմակերպությունների համար հանդիսանա ընկ. Ստալինի ցուցումների իրագործման ինքնաստուգման յեռամսյակ, վորի հիման վրա պետք է կուսակցական և պրոֆեսիոնալ մասսայական աշխատանքները ծավալել, բարձր աստիճանի հասցնել հարվածայնությունն ու սոցմրցումը և ապահովել 1931 թվի արդիինպլանի իրագործումը։

անվորներին, մանավանդ զորացը-
ին և Ադրբեջանի գյուղից յեկած
ության մեջ հաստատելու համար՝
զացնելու հանրակացարանների ու
տարությունը։

ընկ. Ադավերդիյնվի հայտարա-
ը-նոյեմբեր ամիսներ ավարտվում
թեթև տիպի 42 տների կառուցումը։

տորհդին և Ադնեվթին՝ անհապաղ
ության հիման վրա՝ Ադնեվթի տնե-
ն, ովքեր այլևս կապ չունին Ադ-
հետ։

ին ստեղծելու կառավարական հան-
հանության Ժողկոմատի զեկավարու-
հարցի վերաբերմամբ Կենտկոմի ու
որոշումը։

ին տնտեսահաշվին անցնելու չափ-
մանավանդ ցեխում ու բրիգադում։
Ադնեվթին և նավթայինների միությանը՝ մասնա-
ներից և տեսավարներից մի խումբ կազմել, վորին և
Ադնեվթի մի քանի հիմնական արտադրական ստո-
ներում ուսումնասիրել տնտեսահաշվի դրությունը և
միջոցառումներ նշել իսկական տնտեսահաշվի իրագործման
նշանակել՝ ցույց տալ ի հաստատություն Բազվի
Կոմիտեի քարտուղարությանը մինչև սեպտեմբերի 29-ը։

Հանձնաժողովի աշխատանքի ժամկետը—մի ամիս։

10. Մատնագետների նյութական դրությունը բարելավելու համար՝ անհրաժեշտ համարել քաղաքային ռայոնում կազմակերպելու՝ փակ բաշխիչների հետ միասին նաև ճաշարան Ադնեվթի վարչական-տեխնիկական անձնակազմի համար։ Պարտավորեցնել Բազվի Սպառողների Միության նախագահին Բազվի Կոմիտեի բյուրոյի հետևյալ նիստում զեկուցել, թե ինչ միջոցներ են ձեռք առնված այդ ուղղությամբ։

Առաջարկել Ադնեվթին հարվածային կարգով հանրակացարան—տներ կառուցել բոլոր ռայոններում վարչական-տեխնիկական անձնակազմի համար։ Կառուցումների պլանը ներկայացնել Բազվի կոմիտեի հաստատությանը։

11. Զորբորդ յեռամսյակը պետք է Ադնեվթի և կուսակցական պրոֆեսիոնալ և կոմերիտական կազմակերպությունների համար հանդիսանա ընկ. Ստալինի ցուցումների իրագործման ինքնաստուգման յեռամսյակ, վորի հիման վրա պետք է կուսակցական և պրոֆեսիոնալ մասսայական աշխատանքները ծավալել, բարձր աստիճանի հասցնել հարվածայնությունն ու սոցմրցումը և ապահովել 1931 թվի արդիինպլանի իրագործումը։

«ՊՐԱՎԴԱ» | 1931 թ. հոկտեմբերի 4.

ԴԵՊԻ ՆԱՎԹԱՀՈՐԵՐԸ, ԴԵՊԻ ԽՈՐԱՔԱՇ ՆԱՍՈՍՆԵՐԸ ԴԵՊԻ ՓՈԽԱԴՐՄԱՆ ՑԵՎ ՄՂՄԱՆ ԿԵՏԵՐԸ

Նավթային արդյունաբերությունը Խորհրդային Միության ժողովրդական տնտեսության առաջավոր ճյուղերից մեկն է։ Այստեղ մենք առաջավոր տեխնիկային տիրապետելու կողմից ավելի շատ նվաճումներ ենք ունեցել, քան թե սոցիալիստական շինարարության վորևե բնագավառում։ Մենք ոչ միայն շատ առաջ ենք անցել նավթահանության նախապատերազմական չափից, այլև փաստորեն՝ շատ բարձր տեխնիկական հիմունքով կառուցել ենք արդյունաբերության այդ կարևորագույն ճյուղը։ Բավական է միայն հիշել նոր նավթային հողերի շահագործման մասին, նոր յուրացվող ռայոնների մասին, հարվածական հորափորությունը պատտականի փոխելու մասին, ժելոնկան խորաքաշ նասոսով, կոմպրեսորով փոխարինելը, գազլիֆտի մասին, նավթահանությունը, մինչև իսկ շատրվանայինը փակ ձևով կատարելու մասին, նավթահանքերը շահագործելու մասին, նոր հզոր նավթաթոր գործարանների, կրեկինգերի և տրուբչատկանների մասին, բենզինի ստացումն ավելացնելու մասին (1913 թ. 2,7% փոխարեն—1930թ. 11,9%), նոր նավթագքների մասին և այլն, հասկանալու համար, թե ինչպես թափ է ստացել սոցիալիստական նավթային արդյունաբերության վերակառուցումը։

Ինչպես հայտնի է, մեր նավթային արդյունաբերության շուրջը սուր դասակարգային պայքար է ծավալվել, վոր իր ամենացայտուն արտահայտություն է գտել վնասատվության մեջ և համաշխարհային նավթային կոնցերնների կատաղի կռվում ընդեմ խորհրդային նավթն արտասահմանում սպառելու ցեվ մեկը և մյուսը փլուզումով և վերջացել։ Բազվի ու Գրոզնու պրոլետարները հնգամյակն ավարտել են $2^1/_2$ տարում. և մեր խորհրդային նավթարդյունաբերությունը համաշխարհային նավթահանության մեջ Միացյալ Նահանգներից հետո յերկրորդ տեղն է բռնում։ Նավթային արդյունաբերության բնագավառում մենք առանձնապես արագ տեմպերով ենք իրագործում «հասնել և առաջ անցնել» խնդիրը։

Խորհրդային և կապիտալիստական նավթարդյունաբերության զարգացման ուղին շատ ցայտուն կերպով արտացոլում է այն սկզբունքային տարբերությունը, վոր կա յերկու սիստեմների՝ կապիտալիստականի ու սոցիալիստականի միջև։ Համեմատե-

ցեք ամերիկական իմպերիալիստների շահագործումները, ռազմական եքսպեդիցիաների միջոցով ստիպողաբար դադարեցնում են նավթահանությունը մի շարք ռայոններում (որինակ՝ Մեքսիկայում), և խորհրդային նավթարդյունաբերության հարվածային աշխատանքը, վորը մինչև իսկ Կասպից ծովից պոկում է նրա նավթային հարստությունները (Բագվում Իլիչի Բուխատայի լցնելը)։ Մենք բուրգեր ենք դնում մինչև իսկ ջրի վրա, վորպեսզի ավելի շատ նավթ ստանանք, իսկ ամերիկական բուրժուազիան շտապ միջոցներ է ձեռք առնում ազատվելու համար նավթի հեղեղից, վորը դաժանագույն տնտեսական կրիզիսի պայմաններում սպառնում է իր հետ քշելու համաշխարհային նավթային մագնատների շահույթներն ու հարստությունը։

Նավթարդյունաբերության հաջողությունները, յեթե վերցնենք տեխնիկական կողմից, հիմնականում վորոշվել են նրանով, վոր այդ ճյուղում ավելի առաջ ու հետևողաբար են գործադրվել ելեկտրիֆիկացիան, մեխանացումը յեվ քիմիականացումը։ Տեխնիկական քաղաքականության այդ յերեք հիմնական գծերը փայլուն կերպով իրենց արդարացրել են նավթարդյունաբերության մեջ։ Ամբողջ ժողովրդական տնտեսությունը դասեր է վերցնում նավթարդյունաբերության վերականգնման ու վերակառուցման պատմությունից։

Սակայն, չնայած փայլուն հաջողություններին—հնգամյակը 2½ տարում կատարելուն—նավթարդյունաբերությունը մի շարք թերություններ ունի։

Լուրջ դաս պիտի առնել նավթարդյունաբերության այս տարվա ծրագիրը կատարելու ընթացքից, մի դաս, վորը ցույց է տալիս, թե չնայած ամենաառաջավոր տեխնիկային՝ շնորհիվ աշխատանքի վատ կազմակերպմանը, շնորհիվ մեխանիզմները լիովին չգործադրելուն—ծրագիրները լրիվ չի կատարվում։ Ճիշտն ասած այդ բանն է վկայում նաև Դոնբասը։ Ավելի ցայտուն կերպով դա հանդես է գալիս նավթարդյունաբերության մեջ, վորտեղ մենք տեխնիկական հեղափոխություն ենք կատարել՝ այդ խոսքի բուն իմաստով, իսկ 8 ամսվա պլանը կատարված է վոչ լրիվ՝ շնորհիվ արտադրության նշանակալից չափով վատ կազմակերպմանը։

Նավթարդյունաբերության փորձը վկայում է նաև այն մասին, վոր աշխատանքի ճիշտ կազմակերպումը բոլորովին չի ուղեկցում տեխնիկային ավտոմատիկ կերպով։

Նավթարդյունաբերությունը լրիվ չի կատարում այս տարի իր ծրագիրը հենց այն պատճառով, վոր տեխնիկական կատարելագործություններին չի ուղեկցել բավականաչափ յեռանդուն պայքարը՝ արտադրությունն ու աշխատանքն ուղիղ կազմակերպելու, տեխնիկային տիրապետելու, հավասարակշիռ ու անդիմությունը վերացնելու, ճկուն կոնկրետ տեխնիկական ղեկավարության, խիստ տնտեսաշիվ մացնելու համար։

ИНСТИТУТ МАРКСИЗМА-ЛЕНИНИЗМА

Ճիշտ է, ծրագրի կատարման տոկոսը նավթարդյունաբերության մեջ ավելի բարձր է, քան թե մետաղագործության և ածուխի վերաբերմամբ։ Այս տարվա 8 ամսվա նավթահանությունը, անցյալ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ աճել է 26,4%-ով։

Այնուամենայնիվ 8 ամսվա ընթացքում նավթարդյունաբերությունը պակաս է տվել մոտ 2 միլիոն տոննա նավթ։ Նավթահանության ծրագիրն 8 ամսում կատարված է 87,7%-ով, մշակմանը—90,9%-ով։ Առանձնապես հետ է մնում հորափորությունը—պլանը կատարված է 75,6%-ով։

Այդ պակաս կատարելը—արտադրության և աշխատանքի վատ կազմակերպման ուղղակի արդյունքն է։ Ցեվ իրոք։ Յեթե Իլիչի Բուխտայում դեռևս մի ամիս առաջ 3-րդ կարգի սևագործ բանվորի մի ժամվա գործարքային աշխատանքի համար վճարվում էր 68 կոպեկ, իսկ 5-րդ կարգի փականագործի մի ժամվա ժամանակավարձը հավասար էր 45 կոպեկի, 6-րդ կարգինը—66 կոպեկ, այն ժամանակ ծրագիրը չի կատարվի՝ նույնիսկ ունենալով ամենակատարելագործված մեքենաները, ստանոցները կամ ամենաառաջավոր տեխնիկան։

Իլիչի Բուխտի պլանի չկատարման վերլուծությունը ամբողջովին հաստատում է այս դրությունը։ Որինակ, տարեվերջին կիսամյակում Բուխտայի շտրվանային նավթահանման պլանը կատարվել է 109%-ով, իսկ խորաքաշ նասոսներով ստացվող նավթի պլանը—63,2%-ով։ Ինչու։ «Բակինսկի Բաթչու» բրիգադան ուղղակի հաստատել է, վոր «խորաքաշ նասոսների աշխատանքների խայտառակ տարիֆավորումը բրիգադայի համար ավելի ձեռնատու է դարձնում պարապուրդները, քան թե աշխատանքը»։ Յեթե դրան ավելացնենք նաև լիակատար անդիմություն, վորի արդյունքն այն է, վոր խորաքաշ նասոսների աշխատանքը չի ստուգվում և վոչ վոք նրանց աշխատանքի համար պատասխանատու չի—պատկերը պարզ կլինի։

Նավթահորերում՝ տեխնիկայի վերջին խոսքի համաձայն՝ դրված են հիանալի մեքենայացված նասոսներ։ Բայց շնորհիվ անդիմության,—վորն անխզելի կերպով կապված է բոլոր մեխանիզմների աշխատանքի համար վորոշակի պատասխանատվության բացակայության հետ,—վոչ վոք չի ստուգում նրանց աշխատանքը։ Ցեվ շատ հաճախ խորաքաշ նասոսը խզուր է գործում շատ ժամեր—շնորհիվ ավազի խցանի, վորը պիտի մաքրել։ Նավթահորում նավթ կա, նասոսը գործում է, մոտորը կլանում է հարյուրավոր կիլովատ ժամ ելեքտրական ուժ, բայց նավթ չի ստացվում շնորհիվ աշխատանքի վատ կազմակերպման։ Հարկավոր են, արդյոք, ավելի ցայտուն որինակներ։ Իսկ չէ՞ վոր խորաքաշ նասոսների հարցը մեծ չափով կապված է հին նավթային դաշտերի ճիշտ շահագործման հետ։ Պետք է ավելացնել ևս, վոր

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. БИБЛИОТЕКА
ՀԱՅԿ-ԱՍՍՀ

նավթահանքերում, մանավանդ Բագվում, համարյա չկա տնտես հաշիվ և անտեսհաշվային բրիգադներ։

Շատ հաճախ հենվում են նյութերի, խողովակների, ստանոկների և այլն վատ մատակարարման վրա։ Դրա մեջ, իհարկե, մեծ ճշմարտություն կա։ Արդյունաբերությունը մինչև այժմ հարկավոր ուշադրությունը չի դարձնում մեր գործարաններում նավթահանության սարքավորման արտադրությունը զնելու գործին։ Բայց, չէ՞ վոր փաստ է, վոր, որինակ, առաջին յեռամսյակում Աղնեվթում անհարգելի պատճառներով յեղած պարապուրդների վրա ծախսվել է հորափորության ամբողջ ժամանակի 17,1%։ Քանի՞ մետր կարելի եր փորել այդ ժամանակի ընթացքում։ Իսկ չէ՞ վոր հորափորման տեմպերի նավթահանությունից հետ մնալը ծանր հետևանքներ և սպառնում՝ նավթային արդյունաբերության հետագա զարգացման համար։

Զոմանք պատրաստ են հանգստանալու դափնիների վրա, կարծելով՝ թե նավթային արդունաբերության մեջ արդեն ամեն ինչ արված է։ Այդ ոպորտունիստական տրամադրությունները բացի վնասից վոչ մի ոգուտ բերել չեն կարող։ Նավթային արդյունաբերությունը մոտ ժամանակներս պետք է լուծի տեխնիկական նոր խոշոր խնդիրներ։ Վերցնենք, թեկուզ, Բագվի ինժիներ Կապելյուշնիկովի տուրբինային հորափորման գյուտի կիրառման հարցը։ Այդ հարցում յեղած վոլոկիտան, արագության, համարձակության և ճկունության բացակայությունը միանգամայն անհասկանալի են։ Վոր Աղնեվթի պես մի առաջատար նավթային տրեստի ապարատի առանձին ողակներում միշտ չե, վոր զգայուն վերաբերմունք են ցույց տալիս նոր, ռացիոնալացման առաջարկներին, այդ վկայում է՝ առանց նասոսային խողովակների խորաքաշ նասոսով շահագործման արժատացմանը ցույց արվող «սառը» վերաբերմանքի փաստը։

Նավթային արդյունաբերությունը, վորը կարողացել է իր 5-ամյակը կատարել $2^1/_2$ տարում, բոլոր հնարավորություններն ունի 3-րդ տարվա պլանը վոչ միայն կատարելու, այլև գերակատարելու համար։ Զպիտի մոռանալ, վոր ինդուստրացման և կոլեկտիվացման բուռն աճումը, վոր տեխնիկայի կատարելագործումը հսկայական պահանջներ են ներկայացնում արդյունաբերության հենց այն ճյուղին։ Նավթային արդյունաբերության մեջ իրար են հանդիպում մեր զարգացման երեք ուղիները։ Այս տարվա 8 ամսում տրակտորների համար 72,5% ավելի է կերոսին բաց թողնված, քան թե անցյալ տարի։ Յերկրի ներսում բենզինի սպառումը նույն ժամանակամիջոցում ավելացել է 67,8%-ով։ Նոր բարդ մեքենաները, ավիացիան պահանջում են բենզինի յեվ, մանավանդ, յուղերի նոր վորակ։ Անհրաժեշտ է տասնյակ հաղարավոր տոն միլոնավթ։

Նավթային արդյունաբերության պլանների կատարումը կարևորագույն նշանակություն ունի Խորհրդային Միության համար։ Նավթարդյունաբերությունը կարող է նավթահանության իր հանդիպակաց պլանն առաջադրել յեկող 4-րդ յեռամսյակում։ Հանդիպակացը կդառնա վերակառուցման լծակն ու դրոշը։ Բագվի կուսակցական կազմակերպությունը, վորը բոլշևիկորեն վերջ է տվել գրուպպովշչինային և կուռ շարքերով պայքարում է նավթի համար, պետք է գլխավորի առաջավոր բանվոր-հարվածայինների ենտուզիազմը՝ նավթահանության հանդիպակացի համար մղվող պայքարում։ Ապշերոնի թերակղզին պետք է արշավ սկսի պլանները գերակատարելու համար և իր հետևից տանի Միության մնացած նավթային ռայոնները։

Բայց միաժամանակ պետք է առանձին սրությամբ ընդգծել յերկաթուղային և ջրային տրանսպորտի դերը։ Տրանսպորտի մի շարք կուսկազմակերպություններում աջ-ոպորտունիստական տրամադրություններին դեռևս ջախջախիչ հարված չի հասցրված։ Հետևանքն այն է, վոր տրանսպորտի վատ աշխատանքը ստեղծում է նավթային խթաններ, անմիջական կերպով հարվածում է նավթահանությանը։

Նավթահանության պլանների կատարման և գերակատարման համար մղվող պայքարը կպսակվի լիակատար հաջողությամբ, յեթե յերկաթուղայինները և ջրային տրանսպորտի գործիչները բոլշևիկորեն կռվեն նավթը տեղափոխելու համար։

Բուքսիրային շոգենավերի արագությունը, նավթային բարժերի տարողությունը, յերկաթուղու հստակ և հարվածային աշխատանքը, ցիստերնների ժամանակին վերադարձնելը և նավթային եշելոնների ժամանակին ճանապարհելը—հաղթանակի պայմաններն են, նավթի մասին կենտրոնական Կոմիտեի դիրեկտիվների հաջող կատարման պայմաններն են։

Նավթահանության և նավթի փոխադրության պլանները կապված են իրար հետ։ Կուսակցությունը պահանջում է, վոր թե՛ մեկը յեվ թե՛ մյուսը կատարվի։

ՎՃՌԱԿԱՆՈՐԵՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑԵՆՔ ԱԶՆԵՎԹԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ—ՆՈՐ ՁԵՎՈՎ

ՎԵԿԱՊԵ-ի (բ) Անդրյերկրկոմի 1931 թ. հոկտեմբերի 4-ի վորոշումը

ՎԵԿԱՊԵ-ի (բ) Անդրյերկրկոմը մատնանշում է նավթի պլանի իրագործման բավական հետ մնալը։ 9 ամսում նավթահանման պլանի 92,4 տոկոսն է կատարված, հորատորման—72,4 տոկոսը, նավթամշակման—96,3 տոկոսը։ Հուլիսին ու ոգոստոսին արտադրական ցուցանիշների նկատմամբ բարելավումը սուր կերպով վատացել է սեպտեմբերին (նավթահանությունը—84,6 տոկոս, հորատորությունը—633 տոկոս), վորը նավթարդյունաբերության աշխատանքում խորացող ճեղքվածքի գոյությունն է ցույց տալիս։

ՎԵԿԱՊԵ-ի (բ) Անդրյերկրկոմը հաստատում է, վոր պլանի կատարելու բոլոր անհրաժեշտ պայմանները կան և միանգամայն մի կողմ է նետում պլանն իրագործելի լինելուն (15.300.000 տոննն) չհավատալը։ Նավթի պլանը չկատարելու հիմնական պատճառն այն է, վոր «Ազնավթը հետ է մնում իր աշխատանքը՝ սոցիալիստական շինարարության արագացրած տեմպերի համապատասխան վերակառուցելու գործում. չի կարողանում պայքար ծավալել տնտեսական ապարատում յեղած բյուրոկրատիզմի տարրերի դեմ, ապահովել իրոք տնտեսաշվի արմատացումը, չի կարողանում տիրապետել տեխնիկային ու հենվել բանվորական մասսաների աճող արտադրական նախաձեռնության վրա. տեղական կուսակցական, պրոֆմիութենական ու կոմյերիտական կազմակերպությունները բավականաչափ չեն վերակառուցվում՝ իրանց յերեսը դեպի 1931 թվի ծրագիրը դարձնելու» (ՎԵԿԱՊԵ-ի (բ) Անդրյերկրկոմի ու Անդրկոմկոսի Վերահսկիչ Հանձնաժողովի հուլիսի միացյալ պլենումի բանաձևից)։

Յերկրային Կոմիտեն մատնանշում է ընկեր Ստալինի ցուցմունքների իրացման թույլ տեմպը։ Յերկրային Կոմիտեն հավանություն է տալիս նավթի մասին Անդրկոմկուսի (բ) Բագվի Կոմիտեի այս տարվա սեպտեմբերի 26-ի վորոշմանը։ Յերկրային Կոմիտեն գտնում է, վոր մնացած չորրորդ յեռամսյակը պետք է լիովին ոգտագործել՝ ճեղքվածքը լիկվիդացիայի յենթարկելու և հնգամյակի յերրորդ վճռական տարվա նավթի պլանն իրագործելու, լայնորեն զարգացնելով առաջավոր հարվածային բանվորների՝ նավթահանման վերաբերող հանդիպակաց պլանի համար ունեցած նախաձեռնությունն ու գլուխ անցնելով նրանց խանդավառությանը։

Բացառիկ նշանակություն տալով ընկ. Ստալինի հրահանգները կենսագործելուն՝ ՎԵԿԱՊԵ-ի (բ) Անդրյերկրկոմը հավանություն է տալիս այդ հրահանգները կյանքի մեջ մտցնելու մասին Բագվի Կոմիտեի նախաձեռնությանն ու վորոշմանը՝ կազմակերպությունների ինքնաստուգման վերաբերմամբ, այդ ինքնաստուգումն ամբողջապես կապելով 4-րդ յեռամսյակի խնդիրների հետ։ ՎԵԿԱՊԵ-ի (բ) Անդրյերկրկոմը գտնում է, վոր Անդրկովկասի հանրապետական մամուլը պետք է լայնորեն լուսաբանե ինքնաստուգման փորձը և Բագվի բանվորների նախաձեռնության շուրջը մոբիլիզացիայի յենթարկի անդրկովկասյան կազմակերպություններին ու բանվորներին։

Նավթի ճեղքվածքը լիկվիդացիայի յենթարկելու կտրևորագույն պայմանն է՝ ընկ. Ստալինի ցուցմունքների հիման վրա վճռականորեն վերակառուցել տնտեսական-տեխնիկական ղեկավարությունը, կուսակցական, պրոֆեսիոնալ ու կոմյերիտական կազմակերպությունները։

Արտադրության, առանձնապես մեքենայացրած նավթահանման տեխնիկային տիրապետելը։ Պայքար աշխատանքի ուղիղ կազմակերպման համար։ Հավասարանքի և անդիմության լիկվիդացիան։ Խիստ տնտեսհաշիվ։ Մասսաների կազմակերպում—ահա այն հիմնական ողակները, վոր լուծում են կենտրոնական խնդիրը։ Ուստի և նրանցից պետք է բռնի Բագվի ամբողջ կազմակերպությունը։ Յուրաքանչյուր բջիջի և յուրաքանչյուր նավթային կոմունիստի իսկական շրջադարձ—յերեսները դեպի պլանի իրագործումը վորոշող գլխավոր հարցերը, հարվածային շարժումով բոլոր կոմունիստների լիովին ընդգրկել ու արտադրությունում նրանց ունեցած առաջապահ դերը բարձրացնել,—ահա կարևորագույն խնդիր, վոր պետք է լուծվի ամենակարճ ժամանակամիջոցում։

Յերկրային Կոմիտեն պարտավորեցնում է Անդրկոմկուսի (բ) Կենտրոնական Կոմիտեին ու Բագվի Կոմիտեին, Ազնավթին և բոլոր պրոֆեսիոնալ ու կոմյերիտական կազմակերպություններին, բոլոր բանվորական մասսաները հնգամյակի, յերրորդ վճռական տարվա պլանն իրագործելու համար մոբիլիզացիայի յենթարկելու հիման վրա՝ վճռական բեկում առաջացնել նավթի համար մղվող պայքարում։

ԻՆՔՆԱՍՏՈՒԳՈՒՄԸ ՏԱՆԵՆՔ ՍՈՎԽՈԶՆԵՐԸ, ԿՈԼԽՈԶՆԵՐԸ, ՄԵՔԵՆԱ-ՏՐԱԿՏՈՐԱՅԻՆ ԿԱՅԱՆՆԵՐԸ

Ուլուխանլուի մեքենա-տրակտորային կայանի բանվորներ, տրակտորիստներ և ագրոպերսոնալը վորոշել ենք լծվել ընկ. Ստալինի ցուցմունքների կատարման ինքնաստուգմանը

Ընկ. Ստալինի ցուցմունքները կիրառելու համար մոցության ենք կանչում Վաղարշապատի, Բորչալուի յեվ Սղոստափայի մեքենա-տրակտորային կայաններին

Քննելով Բագվի բոլշևիկների կոչը՝ մենք—Ուլուխանլուի մեքենա-տրակտորային կայանի բանվորներս, տրակտորիստներս և ագրոպերսոնալը վորոշել ենք լծվել ընկ. Ստալինի ցուցմունքների կատարման ինքնաստուգմանը։

Ուլուխանլուի մեքենա-տրակտորային կայանն ունի մի շարք նվաճումներ.—մեքենա-տրակտորային կայանի կողմից սպասարկվող Ղամարլուի ռայոնը գերակատարել է գարնանացանի պլանը, շարքացանը կատարված է 100%-ով, պարարտացման պլանը կատարված է 100%-ով, մշակման կամպանիան ավարտված է ժամանակին, աշնան ճերկի պլանը գերակատարվում է՝ մինչեվ հոկտեմբերի 5-ը որացուցային պլանը կատարված է 207-ով. ճերկին մասնակից են արված յեկանները։ Մեքենա-տրակտորային կայանի՝ մեքենատնտեսությունների վրա ունեցած տնտեսա-քաղաքական ուժեղ ազդեցության շնորհիվ կոլեկտիվացման տոկոսը, վոր գարնանը յեղել է 28, հոկտեմբերի 1-ին բարձրացել է 62,5-ի։

Բայց նվաճումների հետ միասին մենք ունենք շատ խոշոր բացեր ու թերություններ.

1. Բանվորական ուժը.

Աշխատանքի վարձատրության անճիշտ սիստեմը բանվորական ուժի մեծ հոսունություն է ստեղծում։ Մեքենա-տրակտորային կայանը տրակտորիստների մշտական կադր չունի։ Աշնանային հերկի ժամանակ աշխատող տրակտորիստները չեն ամրացված մեքենա-տրակտորային կայանին՝ կոլխոզների հետ պայմանագիր կնքելով։

Աշխատանքի մեքենայացումը չի հարթված։ Ամբողջ մեքենա-տրակտորային կայանը միայն մի պտուտակագլխի (գայկայի) բանալի ունի. հաճախ պտուտակագլուխը բացվելու պատճառով ստիպված ենք լինում յերկու տրակտոր գործից հանել և մեկ տրակտորով բուքսիրի վերցրել մյուսին ու տանել հաճախ 15-20 կիլոմետր հեռու գտնվող արհեստանոցը՝ պտուտակագլուխն ամ-

բացնելու համար։ Զունենք նորոգման շարժական արհեստանոց, վորը կազմակերպելու համար բոլոր հնարավորությունները կան։

2. Բանվորների աշխատավարձը.

«Ձախ» հավասարեցմանը մեքենա-տրակտորային կայանում վերջ չի տրված, վոչ մի տարբերություն չկա վորակյալ ու վոչ վորակյալ տրակտորիստների վարձատրության մեջ։ 2—3 տարվա ստաժ ունեցող տրակտորիստը,—վորը հերկելիս տալիս է ուղիղ ակոսներ, հերկի նորմայով պահանջվող խորությամբ և խարոսներ չի տալիս,—ստանում է միյեվնույն վճարը, ինչ վոր հողը փորփրող 1—2 տարիս ստաժ ունեցող սկսնակը։ Պրոգրեսիվ-պրեմիալ գործարքայինը մեքենա-տրակտորային կայան չի մտցրված։ Արհեստանոցում գործարքային չկա։

Մեքենա-տրակտորային կայանում հաշվեառը անբավարար է դրված։ Տրակտորային և նորոգման աշխատանքների գնահատումը (կալկուլյացիան) ճշգրիտ կերպով չի հաշվում։ Դա արգելք է հանդիսանում բրիգադները տնտեսապես անցնելու, մեքենա-տրակտորային կայանում վոչ մի տնտեսահաշվային բրիգադա չկա։

Յեթե այստեղ ավելացնենք չլուծված բնակարանային հարցը և կուլտաշխատանքի լիակատար բացակայությունը, հասկանալի կդառնա, վոր բանվոր տրակտորիստը մեքենա-տրակտորային կայանում իրեն զգում է վորպես «ամբանոցավոր» (դաչնիկ), միայն ժամանակավոր աշխատող, «վորպեսզի մի քիչ փող շահի և ապա գնա մի վորևե այլ տեղ բախտ վորոնելու» (Ստալին)։ Առանձնապես նկատելի է այդ փախուստը հին, 5—6 տարվա ստաժով տրակտորիստների կողմից, վորոնցից վոչ վոք չի մնացել մեքենա-տրակտորային կայանում։ Մեքենա-տրակտորային կայանում գարնանն աշխատող 120 տրակտորիստներից աշնան հերկին մնացել է միայն 60 հոգի։ Արհեստանոցում 24 վորակյալ բանվորներից մնացել է միայն 2 հոգի։

3. Աշխատանքի կազմակերպումը.

Մեքենա-տրակտորային կայանում անդիմությանը վերջ է տրված ձևականորեն, վորովհետև տրակտորների տրակտորիստները հաճախակի փոխվում են։ Դրա հետևանքն է—մեքենաների կոտրտելը. 35 տրակտորներից 12—15-ը շարունակ նորոգման և գտնվում։ Տրակտորիստների տեխնիկական գիտելիքների մակարդակը ցածր է։

Ուժերի վատ դասավորումը խիստ հարվածում է միավարությանը. հաճախ ագրո-հողամասերի վարիչների կարգադրությունները փոփոխվում են ուրիշ գործիչների հակասական կարգադրություններով։

Լծվելով ինքնաստուգմանը՝

Մենք պարտականություն ենք վերցնում մեզ վրա վերջ տալ այդ բոլոր թերություններին յեվ ավարտել ինքնաստուգումը հետևյալ ցուցանիշներով.—

1. Լիովին վերջ տալ անդիմութեանը տրակտորների վրա։

2. Ամեն մի տրակտորում սարքավորել գործիքների արկղ, գործիքները ցուցակով հանձնելով ամեն մի տրակտորիստի։

3. Տրակտորային պարկն ու արհեստանոցը փոխանցել աշխատանքի պրոգրեսիվ-պրեմիալ վճարման։

4. Մեքենա-տրակտորային կայանին ամրացնել տրակտորիստներին՝ կոլխոզների հետ անվանական պայմանագրեր կընքելով։

5. Պայմաններ ստեղծել ցեխերի, տրակտորային բրիգադների յեվ ագրո-հողամասերի տնտեսության անցնելու *համար, վորի համար, բոլոր տրակտորային և նորոգման աշխատանքների վերաբերմամբ մի ամսվա ընթացքում գնահատումներ սահմանել։*

6. Կազմակերպել տեխնիկական գրագիտության թուրքական յեվ հայկական խմբակներ *տրակտորիստների համար ու ագրո-հողամասերում 3 ագրո-խմբակ՝ կոլխոզնիկների համար։ Բաց անել մեքենա-տրակտորային կայանի կարմիր անկյուն։*

7. Ագրո-հողամասերի կից կազմակերպել պահեստային նավթա-բազաներ։

8. Մի ամսվա ընթացքում տրակտորիստները պետք է տիրապետեն մեքենաները կառավարելու տեխնիկային։

9. Իջեցնել վառելիքի ծախսումը մինչև 27 կիլոյի, մի հեկտարի համար։

10. Ինքնասուգմանը ներգրավել Ղամարլուի ռայոնի կոլխոզները, այնտեղ արտավ կազմելով հետեվյալ լոզունգներով՝—«կոլխոզնիկների յեվ մենատնտեսների 100%-ային մասնակցումը բամբակաքաղին. վոչ մի կիլո բամբակ չթողնենք դաշտերում, բամբակը պետությանը հանձնենք կարմիր սայլաքարշերով»։

Ինքնասուգումը կազմակերպելու համար 3-որյա ժամկետում հրավիրել մեքենա-տրակտորային կայանի արտակարգ խորհուրդ։

Անդրտրակտորակենտրոնին *մենք պահանջ ենք ներկայացնում՝* մեքենա-տրակտորային կայանին մատակարարել պահեստի մասեր յեվ բենզատար-ավտոմոբիլներ։

Խորհ. Հայաստանի փոստ-հեռագրատան լիազորին—*հարվածային կարգով* ավարտել մեքենա-տրակտորային կայանի հեռախոս անցկացնելը։

Մեքենա-տրակտորային կայանների բանվորների միության կենտկոմին յեվ Անդրտրակտորակենտրոնին *խնդրում ենք ամրացնել մեքենա-տրակտորային կայանին մի-մի ներկայացուցչ—գործիչ՝ արշավը տանելու համար։*

Մեզ վրա այդ պարտավորությունները վերցնելով մենք ՎԵԿԱՊԵ-ի (բ) Անդրյերկրկոմի յերկրային որդան «Զարյա Վաստոկա»-ի միջոցով՝ սոցմրցման ենք հրավիրում Վաղարշապատի (Խորհ. Հայաստան), Բարչալուի (Խորհ. Վրաստան) յեվ Աղստափայի

(Խորհ. Ադրբեջանի) մեքենա-տրակտորային կայանների՝ ինքնասուգումն լավագույն կերպով տանելու համար։

«Զարյա Վաստոկա»-ի խմբագրությանը խնդրում ենք հետևել ինքնասուգման ընթացքին։

Կոմունիստական կուսակցության փորձված ղեկավարությամբ՝ վճռականորեն պայքար ծավալելով աջ թեքման, վորպես տվյալ ետապում գլխավոր վտանգի, և «ձախ» ծռումների ու թեքումների վերաբերմամբ հաշտվողականության դեմ՝ մենք կաշխատենք իրագործել Բոլշևիկների բաց թողած լոզունգը՝

— Ոչիսի լինի վոչ մի մեքենա-տրակտորային կայան, վորը չը կարողանա նոր ձևով աշխատել, նոր ձևով ղեկավարել։

Այս նամակը միաձայն ընդունված է Ուլուխանլուի (Հայաստան) «Զարյա Վաստոկա» մեքենա տրակտորային կայանի տրհեստանոցի բանվորների, տրակտորային բրիգադների և ագրո-անձնակազմի ժողովում։

ԻՆՔՆԱՍՏՈՒԳՄԱՆԸ—ԼԻ ԸՆԹԱՑՔ

Ադրկոմկուսի (բ) Բագվի կոմիտեի քարտուղարության վորոշումը

Ադրկոմկուսի (բ) Բագվի կոմիտեի սեպտ. 16-ի և 26-ի վորոշումը լայն արձագանք է գտել Բագվի պրոլետարների միջև։ Բագվեցիները ենտուզիազմի նոր ալիքով և արտադրական նոր վերելքով են պատասխանում՝ կուսակցության ու բանվոր դասակարգի առաջնորդ ընկ. ՍՏԱԼԻՆԻ դիրեկտիվների կատարման ստուգման կոչին։

Սկված ինքնաստուգումն ընթանում է սոցմրցման և հարվածայնության նոր աճման, տնտեսհաշվի բրիգադներ կազմակերպելու, հերթակալական-հանդիպակաց պլան մտցնելու և կուսկազմակերպության բավականաչափ աճման հետ միասին։

Սակայն առանձին ռայոններ վորոշ չափով ձգձգել են կազմակերպչական-նախապատրաստական շրջանը, հետ են մնացել ինքնաստուգումը տանելու գործում ու դեռևս չեն լծվել ընկ. Ստալինի դիրեկտիվների անմիջական իրացմանը. իսկ մի քանի՝ անտեսավարներ ոպորտունիստորեն թերագնահատում են ընկ. Ստալինի դիրեկտիվների վճռական նշանակությունը՝ սոց-շինարարության հաջող զարգացման համար։

Անհրաժեշտ է, վոր Ադրկոմկուսի (բ) բոլոր ռայկոմները, տնտեսորգանները, կուսակցության ու կոմսոմոլի բոլոր բջիջները, Բագխորհրդի, Ադրպրոֆխորհրդի և պրոֆմիությունների ֆբրակցիաներն անհապաղ անցնեն ընկ. Ստալինի դիրեկտիվների գործնական իրականացմանը, համառորեն և սիստեմատիկաբար աշխատեն ձեռք բերել կոնկրետ արդյունքներ՝ ընկ. Ստալինի ամեն մի դիրեկտիվում դրված խնդրի կատարման գործում։

Մատնանշել, վոր շնորհիվ թերագնահատման առանձին ձեռնարկներ և, մանավանդ, հիմնարկներ ձևական, կազմոնի մոտեցում են հանդես բերում դեպի այդ կարևոր կուսակցական-քաղաքական խնդիրը (ընկ. Ստալինի դիրեկտիվների կատարումը) կամ ինքնաստուգումը դարձնում են «հերթական կամպանիա»։ Մինչև այժմ մի շարք կենտրոնական ապարատներ և հիմնարկներ չեն լծվել ինքնաստուգման ու ընկ. Ստալինի դիրեկտիվների հիման վրա չեն նախագծել կոնկրետ միջոցառումներ՝ պայքարելու տնտեսհաշվի, խնայողության ռեժիմի և բանվորների կենցաղային հարցերին էլ ավելի մեծ ուշադրություն դարձնելու համար։

Հանձնարարել Ադրկոմկուսի (բ) քաղռայկոմին՝ Բագվի Կոմիտեյի կազմհրանդչական բաժնի հետ միասին՝ ոպերատիվ միջոցառումներ նախագծելու—Բագվի հիմնարկները և այլ խորհրդային, տնտեսական կազմակերպություններն անհապաղ ներգրավելու համար ինքնաստուգման աշխատանքներին։

Բագվի Կոմիտեն առաջարկում է բոլոր ռայկոմներին և բջիջներին այնպես անել, վոր ընկ. Ստալինի դիրեկտիվները գործնականում անհապաղ դառնան կուսակցական, խորհրդային, տնտեսական, պրոֆմիութենական և կոմսոմոլի կազմակերպությունների ամբողջ աշխատանքի առանցքը։

Ընկ. Ստալինի դիրեկտիվները բանվորական մասսաների արտադրական-քաղաքական ակտիվության նոր վերելքի և ծավալուն բոլշևիկյան ինքնաքննադատության հիման վրա, Բագվի Կոմիտեն մարտական խնդիր է դնում ամբողջ կազմակերպության առաջ՝ լիակատար բեկում առաջ բերել արտադրական պլանների, մանավանդ նավթի պլանի կատարման մեջ, մինչև Հոկտեմբերյան հեղափոխության 14-րդ տարեդարձը։

Առաջարկել Բագվի թերթերի խմբագրություններին՝ լայնորեն լուսաբանել ինքնաստուգման ընթացքը, գործնական արդյունքները, ընկ. Ստալինի դիրեկտիվների կատարման բրիգադների աշխատանքի փորձն ու մեթոդները, ցուցադրելով վերակառուցման, տնտեսհաշիվ մտցնելու, հավասարեցումն ու անդիմությունը վերացնելու և իսկական հերթակալական-հանդիպակաց պլանի համար մղվող պայքարի լավագույն որինակները։

ՀՀ Ազգային գրադարան
NL0210546

31. 322

ԳԻՆԸ 15 ԿՈՊ.

Jol. Stalinin qəstərişlərinin jerinə jetirilməsini joklajırık.

I brakılış.

AZƏRNƏŞR

Bakı—1931